

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի խոսքը
«Կրթության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովի բացմանը
(2018 թ. հոկտեմբերի 26-27, Գյումրի)

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ,

Ուրախ եմ ձեզ ողջունել «Կրթության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովի մեկնարկի կապակցությամբ:

Այսօր, ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում խիստ կարևորվում են կրթության ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումները:

Գլոբալիզացիան, բոլոնյան գործընթացին ինտեգրվելը, շարունակական և ողջ կյանքում սովորելու անհրաժեշտության ըմբռնումը նոր մարտահրավերներ են առաջադրում ամբողջ կրթության, մասնավորապես՝ բարձրագույն կրթության համակարգին:

Հենց դա է պատճառը, որ ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հաստատված գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թթ. ռազմավարական ծրագրի նպատակների թվին է դասվել նաև կրթության, գիտության, տեխնոլոգիայի և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծումը՝ կրթությունը մրցունակ և հրապուրիչ դարձնելու, գիտության վերարտադրությունը և տնտեսության կայուն զարգացումն ապահովելու համար:

Իր հերթին ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն խիստ կարևորում է ոլորտի համակարգաստեղծ նշանակությունը և պատրաստակամություն է հայտնում պետական բյուջեի սահմաններում իր աջակցությունը ցուցաբերել նմանատիպ միջոցառումներին:

Ընդհանրապես, այսօրինակ միջոցառումները միտված են նաև գիտության և կրթության փոխշահավետ համագործակցությունը խրախուսելուն և մասնագիտական բազմապրոֆիլ հարթակ ստեղծելուն: Դրանք հնարավորություն են տալիս երիտասարդ գիտաշխատողներին ներկայացնել իրենց կողմից իրականացվող և հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների արդյունքները, ոլորտի ներկայացուցիչներին ներկայացնել իրենց գործունեությանն առնչվող խնդիրները:

Մենք կարևորում ենք այս միջոցառումը նաև նրանով, որ այն խթան պետք է հանդիսանա կրթության և գիտության ոլորտների համագործակցության և ինտեգրման համար: Ակնկալվում է, որ այս օրերի համատեղ աշխատանքի արդյունքում այդ փոխհամագործակցությունը կակտիվանա:

Եթե այլ երկրներ ձգտում են արդյունահանել իրենց ընդերքի հարստությունը, ապա մենք ստիպված ենք պեղել մեր տաղանդները, ապավինել մեր ուղեղներին: Հայաստանի բարեկեցությունը մենք պետք է կառուցենք ստեղծագործական աշխատանքով, քանի որ օգտակար հանածոների պաշարները մի օր վերջանում են, մինչդեռ մարդու ստեղծագործական ունակությունները գործնականում ուղղակի անսահմանափակ են: Եվ այս ամենի հիմքում, անշուշտ, դրված է կրթությունն իր արդյունքներով:

Եվ վերջում, կցանկանայինք, որ համալսարանը, ակտիվորեն մասնակցեր ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կողմից կազմակերպվող մրցույթներին, ծրագրերին: Դա հնարավորություն կտա գիտաաշխատողներին ներգրավված լինել պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական թեմաներում և ծրագրերում, կազմակերպել տարբեր գիտական միջոցառումներ, իսկ երիտասարդ գիտնականներին՝ մասնակցել, ինչու չէ, նաև կազմակերպել ամառային դպրոցներ, օգտվել երիտասարդների աջակցությանն ուղղված դրամաշնորհներից:

Գիտության կոմիտեն, հանդիսանալով ոլորտում պետական քաղաքականության պատասխանատուն, մշտապես աջակցում է գիտնականներին իրենց նախաձեռնություններում, ինչպես նաև կազմակերպում է տարատեսակ քննարկումներ՝ հնարավորություն տալով ոլորտի մասնագետներին վեր հանել իրենց մտահոգող խնդիրները, ակտիվորեն մասնակցել գիտության ոլորտի զարգացման ծրագրերի մշակմանը: 2018 թ. սեպտեմբերից սկսած յուրաքանչյուր ամսվա առաջին ուրբաթ օրը, ժամը 15:00-18:00-ը Գիտության կոմիտեի նիստերի դահլիճում կազմակերպվում են գիտության ոլորտին նվիրված քննարկումներ՝ կոմիտեի նախագահի կամ նախագահի տեղակալի ղեկավարությամբ:

Կոչ ենք անում բոլոր շահագրգիռ կողմերին առաջարկություններ ունենալու դեպքում ակտիվորեն մասնակցել այդ քննարկումներին: Դուք կարող եք ձեր նպաստը բերել ինչպես գիտության բարեփոխումների շրջանակներում մշակված ծրագրերի ներդրման,

այնպես էլ գոյություն ունեցող ծրագրերն ու նախաձեռնությունները բարելավելու և նորերը մշակելու գործում:

Ավարտելով խոսքս, ուզում եմ կրկին ընդգծել, որ առանց մտավոր ներուժի աճի, որը պայմանավորված է կրթության և գիտության զարգացմամբ, չի հաջողվի լուծել սոցիալ-տնտեսական բարդ խնդիրներ, լինել մրցունակ հարափոփոխ աշխարհում և կառուցել զարգացած ժողովրդավարական հասարակություն:

Հարգելի մասնակիցներ,

Մեկ անգամ ևս ողջունում եմ բոլորին գիտաժողովի բացման կապակցությամբ և մաղթում արդյունավետ և հաճելի աշխատանքային օրեր:

Մամվել Հարությունյան